

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 մայիսի 2015 թվականի

թիվ 27

քաղ. Աստանա

**«Մաքսային միության՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգն ընդունելու վերաբերյալ» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամ Բ. Ա. Սագինտանի տրամադրած տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. «Մաքսային միության՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգն ընդունելու վերաբերյալ» Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

3.2 ենթակետից հետո 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2.1 և 3.2.2 ենթակետերով՝

«3.2.1 Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ազգային օրենսդրությանը համապատասխան՝ մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը տրամադրված N<sub>3</sub> , O<sub>3</sub> և O<sub>4</sub> կատեգորիաների տրանսպորտային միջոցների տիպի հաստատումներն ունեն ուղղակի գործողություն Ղազախստանի Հանրապետության տարածքում մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, սակայն 2016 թվականի հուլիսի 1-ից ոչ ուշ.

3.2.2. Սույն Որոշման 3.2.1 ենթակետին համապատասխան՝ Ղազախստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրված տրանսպորտային միջոցների թիվը չի կարող գերազանցել N<sub>3</sub> կատեգորիայի համար 2100 հատը, O<sub>3</sub> և O<sub>4</sub> կատեգորիաների համար՝ 2100 հատը»:

2. Ղազախստանի Հանրապետության կառավարությանը՝ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել սույն Որոշման 1-ին կետի դրույթների իրականացումը՝ ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Հայաստանի Հանրապետությունից</b>	<b>Բելառուսի Հանրապետությունից</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից</b>
<b>Վ. Գաբրիելյան</b>	<b>Վ. Մատյուշևսկի</b>	<b>Բ. Սագինտան</b>	<b>Ի. Շուվալով</b>